պիսկոպոս — զի Փափին աշխարհն ամենայն 150
իշխանութիւն, մեծութիւն եւ փառք կար-
զաւորաց ձեռքն է. իսկ աշխարհականքն որ-
պէս ստրուկ մի են. եւ զի բազում են քան
աշխարհականս քահանայք, վասն այն տիրել
են ի վերայ նոցա — եկեալ ասեն. Աղաչեմք 155
զքեզ, տուր հրաման բերել ի սրիթալն
զՓլանն: Եւ նա ասէ տանել առ հագիմն, զի
տեսանիցէ զերակսն: Եւ այս վասն այն, զի են
բազում խարեբայք, որ դատարկ շուր գալն
ուսել են, բանի գլուխ չունին, սուտ հիւանդ 160
կու լինենան, որ առնուն ի սրիթալն, մուփտ
հաց ուտեն, կակուղ տօշակ պառկին: Վասն
որոյ պիտոր հագիմն հայի զերակսն եւ իմա-
նայ. եւ թէ ճշմարիտ հիւանդ է՝ տայ նմա
թղթիկ մի առ փոքր քէհեան. եւ նա տայ 165
մեծ քէհին, եւ հրամայէ մուծանել զնա ի
սրիթալն, եւ զիմար առնել: Եւ իբրեւ մտնէ,
հանեն ի նմանէ զիւր օշլոտ եւ աղտոտ զգեստն
դարշելի, մինչեւ ի շապիկն. եւ տան սպի-
տակ շապիկ եւ վարտիք, տօլամայ. եւ չինեն 170
տօշակ եւ անկողին ի վերայ բարձր մահճի:
Զի անդր ոչ նստին եւ ոչ ննջեն ի վերայ
գետնի, այլ ի վերայ աթոռոց. զոր եւ զմեզ
ծաղր առնէին, թէ դուք անասնոց նման ո՞ր-
պէս նստիք կամ ննջէք ի վերայ գետնի, կամ 175
ո՞րպէս հանդչիք· զի ի խոնաւութեանց եր-
կրի եւ ի հիւթոյ բազում ցաւ եւ վնասք գոր-

169 շապիքն: — 170 շապիք: — 171 յանկողին: